Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

25.106

15 JAN 2010

ԿԱՆԱՆՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

331·98
Կ-20

ԱԶԵՐՆԵՇՐ

Բագու 1932

С 32-И
А 198
ДУБЛЕТ
31-98
1-29

ԿԱՆԱՆՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԱՋԵՐՆԵՐԻ
Բագու.—1932

25.106

17 MAY 2013

AZƏRNƏŞR mətbəəsində basıldı.
Bakı, Balşoj Marskoj və Krasno-Presnensqi quçələrin tinində № 16/36

Baş Mətbyat Mudirliqi № 8660.
Sifariş 1028. Sajı 1000. Siatelçu Б.

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Արմ ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
61400

«Սոցիալիստական տնտեսության շինարարությունը կարող է առաջ շարժվել միայն այն ժամանակ, երբ հարյուրավոր կանանց փոխարեն նրան կմասնակցեն միլիոն ու միլիոն կանայք»։

ԼԵՆԻՆ

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ԱՊԱՀՈՎԵՆՔ ԿԱՆԱՆՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Սոցիալիստական շինարարության բացառիկ թափի պայմաններում, գործադրությունի լիակատար լիկվիդացիայի և աշխատավոր մասսաների բարեկեցության աճման հանգամանքներում՝ կանանց աշխատանքը ժողովրդական տնտեսության մեջ բոլշևիկյան տեմպերով արմատացնելը բացառիկ քաղաքական կարևորություն ունեցող նշանակություն է ստանում։

Մանր անհատական գյուղացիական տնտեսությունների մասսայական անցնելը կոլեկտիվացման ուղին՝ գյուղատնտեսական աշխատանքի պրոցեսների մեքենայաց-

ման ամենամեծ չափով ոգտագործումով՝ միանգամայն նոր հեռանկարներ է բաց անում կանանց աշխատանքը գյուղատնտեսության մեջ ոգտագործելու վերաբերմամբ։

Դրան համապատասխան՝ Անդրկենտգործկոմի պրեզիդիումը վորոշել է գյուղխորհուրդներին ու ռայոնական գործկոմներին կից կազմակերպել կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցություններ, վորոնք գործելու են խորհուրդների ինքնուրույն սեկցիաների իրավունքներով։

Կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների կազմակերպման նպատակն է՝ ներգրավել «կոլխոզային, սովխոզային, բատրակա-չքավորական ու միջակային կանանց լայն մասսաները գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման գործի մեջ կոլխոզային շինարարության և համատարած կոլեկտիվացման ու նրա հիման վրա կուլակության— վորպես դասակարգի լիկվիդացիայի բազայով, նույնպես և ոգտագործել նրանց գործնական փորձառությունը, մանավանդ, գյուղական տնտեսության առանձին ճյուղերի (կաթնային, անասնապահական, վոչխարաբուծական, թռչնաբուծական, մեքանիզացիոն, մեղվաբուծական, խոզաբուծական, կանանց տնայնագործական զբաղմունքների և այլն) զարգացման վերաբերմամբ (թե կոլխոզների անդամների և թե անհատական տնտեսություններում), վորոնց մեջ կանանց աշխատանքն ամենամեծ գործադրություն և մեծ նշանակություն ունի» (Անդրկենտգործկոմի պրեզիդիումի վորոշումից)։

Կոլխոզների անդամների և անհատականների տնտեսություններում՝ գյուղական տնտեսության չհամայնացրած առանձին ճյուղի զարգացումը, որինակ՝ թռչնաբուծությունը—բամբակաբույծի մոտ, մեղվաբուծությունը—դաշտագործի մոտ և այլն,— տեղերում չի ունեցել պահանջվող պլանային ղեկավարություն և կազմակերպչատնտեսական ներգործություն։ Այդ գործում կանանց աշխատանքն գործնական փորձառությունը լիովին կազմակերպված չի յեղել։

Կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների կազմակերպությունը հենց կոչված է նրա համար, վոր աջակցի կանանց աշխատանքն լայնորեն ներգրավելուն գյուղատնտեսական արտադրության մեջ, նրանց գործնական փորձա-

ռությունը կազմակերպված կերպով ոգտագործելուն՝ առաջին հերթին գյուղական տնտեսության այն առանձին ճյուղերում (թե կոլխոզների անդամների տնտեսություններում և թե անհատականների տնտեսություններում), ուր կանանց աշխատանքն ունի ամենամեծ գործադրություն և մեծ նշանակություն։

Աղրկենագործկոմի պրեզիդիումի կողմից հաստատված կանոնադրությունը կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների մասին՝ պարզորոշ կերպով սահմանում է նրանց խնդիրները ու իրավունքները։

Կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունները «մշակում և գործնական միջոցներ են գործադրում թե կոլխոզների անդամների և թե մենատնտեսների գյուղական տնտեսության առանձին ճյուղերի ու զբաղմունքների բարձրացման ու զարգացման վերաբերմամբ»։ Դրանում է կայանում կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների հիմնական խնդիրը։

Այդ բանն իրագործելու համար՝ կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունները միջոցներ են մշակում, թե ինչպես բարձրացնել կթի և չըհամայնացրած անասնաբուծության այլ մթերքների ապրանքայնությունը և թե ինչպես հասարակ թռչունները փոխել ազնվացեղ թռչուններով, մեծացնել չհամայնացրած թռչունների քանակը, գործադրել ինկուբատորներ, նպաստելով ամենամեծ չափով ապրանքային ձու և թռչնաբուծության այլ մթերքներ ստանալուն։

Կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունները մեծ դեր պետք է խաղան՝ տների մոտ գտնվող չհամայնացրած այգեգործության ու բանջարաբուծային ճյուղերի զարգացման ու նրանց՝ սպառողական ճյուղերից — ապրանքային և յեկամտաբեր ճյուղեր դարձնելու գործում։ Համաձայն կանոնադրության՝ կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցություններին հանձնարարվում է պլաններ մշակել՝ չհամայնացրած ու տների մոտ գտնվող հողերում տունկային ցանքսակամպանիան տանելու համար, նրան ապահովելով տունկային և ցանքսային ազնվացեղ նյութերով, փաստաթղթերի դեմ պայքարելու միջոցներով, կազմակերպելով բերքի խնամքն ու հավաքումը և մշակումն ու ապրանքային արտադրանքի վաճառքը։

Կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների ուշադրության կենտրոնում պիտի լինին նաև գյուղական տնտեսությունների զանազան ճյուղերի հասարակ տեսակ կամավոր միացումների կազմակերպումն ու զարգացումը։

Դրա հետ միասին՝ կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունները պետք է քննեն ու կենտրեսացնեն կանանց տնայնագործական զբաղմունքների զարգացման պլանները, պետք է կազմակերպեն ու զարգացնեն կանանց տնայնագործական զբաղմունքները, արհեստանոցները, արտելները և այլն ու տնայնագործական զբաղմունքների արտադրանքի վաճառքի պլանները նշեն։

Կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունները — գյուղում մասսայական կազմակերպություններ են, որոնք կոչված են արմատացնելու, զարգացնելու և կազմակերպելու կանանց աշխատանքը, աջակցելու գյուղական տնտեսության ու աշխատավոր կանանց կենցաղի սոցիալիստական վերակառուցմանը։

Խորհուրդներն ու ռայոնական կազմակերպությունները պետք է ապահովեն լավագույն գործառնական ղեկավարությունն առաջին անգամ կազմակերպվող կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների աշխատանքի վերաբերմամբ, փնտրեն և ստեղծեն նրանց համար նյութական բազա սկզբնական շրջանում։ Խորհուրդներն ու ռայոնական կազմակերպությունները պետք է հատուկ ու չթուլացող հսկողություն ունենան և ուսումնասիրեն կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների աշխատանքի պրակտիկան։ Ռայգործկոմների նախագահությունները պետք է յերկար ժամանակով յուրաքանչյուր խորհրդակցությանն ամրացնեն ռայգործկոմի նախագահության անդամներից մեկին, պարտավորացնելով, վերջինիս վոր նա ներկա լինի գյուղխորհրդի այն պլենումին, վորտեղ կազմակերպվում է կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունը և նրա առաջին կազմակերպչական նիստին։ Ռայգործկոմի նախագահության ամրացված անդամը պետք է կազմակերպի ու գյուղխորհրդի միջոցով առաջ շարժի կինխորհրդակցության աշխատանքը, կարգավորելով խորհրդի ամենորյա գործնական ղեկավարությունը։

Խորհուրդները պետք է լայնորեն ժողովրդականացնեն գյուղի աշխատավոր մասսաների մեջ կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների կազմակերպումն ու աշխատանքը։ Գյուղխորհուրդները պետք է սիստեմատիկորեն լսեն զեկուցումներ և ամեն կերպ խրախուսեն ու զարգացնեն կինխորհրդակցությունների աշխատանքը։ Խորհուրդները պետք է ամենասերտ կապ ստեղծեն կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների ու նրանց անդամների և ընտրողների ու անդամներ ընտրող կազմակերպությունների միջև։ Դրա համար գյուղխորհուրդները պետք է կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների զեկուցումները կազմակերպեն ընտրողների առաջ և կանանց խորհրդակցությունների անդամների զեկուցումը—նրանց (անդամներին) ընտրող կազմակերպությունների ու ընտրողների առաջ։

Խորհուրդներն ու ռայոնական կազմակերպությունները պետք է ապահովեն իսկական պլանային ղեկավարություն՝ կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների աշխատանքի վերաբերմամբ և վոչ մի դեպքում չպիտի սահմանափակվեն միայն նրանց պլանները կազմելով ու մշակելով, վորովհետև «իսկական պլանային ղեկավարությունը ծավալվում է միայն պլանը կազմելուց հետո, տեղերում ստուգելուց հետո, պլանի իրագործման, ուղղելու և ճշգրտացման ընթացքում» (Ստալին)։

Կանանց աշխատանքը յերևան բերելու, ճիշտ կերպով զետեղելու, արմատացնելու, զարգացնելու, ոգտագործելու և կազմակերպման խնդիրը պահանջում է վճռական հարված հասցնել ինքնահոսին, անխնա պայքար մղել մի քանի գործիչների աջ-ոպորտունիստական դրույթների դեմ, վորոնք մինչև այժմ փաստորեն վոչ միայն չեն ոգնում, այլև ամեն տեսակ պատրվակներով արգելք են հանդիսանում կանանց աշխատանքի արմատացմանն ու ոգտագործմանը։

Կուլակությունն, անշուշտ, կփորձի վարկաբեկել կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների կազմակերպումը։ Նա փորձում է խանգարել կանանց աշխատանքի արմատացմանն ու կազմակերպմանը։ Կուլակը կաշխատի կոլխոզնիկների և չքավոր ու միջակ մենատնտեսների աշխատավոր մասսաների աչքում

վարկաբեկել կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների կազմակերպության հեղինակությունը և նրա անդամներին—ակտիվիստ կանանց, վորոնք ներդրավված են ու ներդրավվում են։ Գուլակային այդ բոլոր վոտնձգությունների դեմ խորհուրդները պետք է կազմակերպեն աշխատավորների ամբողջ մասսայի անխնա բոլշևիկյան հակահարվածը, պետք է բացարձակ, համարձակ կերպով մերկացնեն և վճռականորեն բնում խեղդեն կուլակի բոլոր նենգությունները։

Մենք պետք է շատ լավ հիշենք, վոր «սոցիալիստական տնտեսության շինարարությունը կարող է առաջ շարժվել միայն այն ժամանակ, յերբ հարյուրավոր կանանց փոխարեն նրան կմասնակցեն միլիոն ու միլիոն կանայք»։

Ադրկենտգործկոմի նախագահի տեղապահ՝
ՄԱՄԵԴԽԱՆ ՄԱՄԵԴԽԱՆՈՎ.

«Իսկական պլանային ղեկավարությունը ծավալվում է միայն պլանը կազմելուց հետո, տեղերում ստուգելուց հետո, պլանի իրագործման, ուղղելու և ճշգրտացման ընթացքում»։

ՍՏԱԼԻՆ

ՎՈՐՈՇՈՒՄ

Ադրբեջանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի պրեզիդիումի

1931 թ. դեկտեմբերի 23-ին

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՎ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԿՈՄՆԵՐԻ ԿԻՑ ԿԱՆԱՆՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ադրբեջանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի պրեզիդիումը վորոշում է.—

1) Հաստատել Ադրկենտգործկոմի կազմբաժնի և Աշխատավոր կանանց կենցաղի սոցվերակառուցման Ադրկոմիտեի առաջարկած կանոնադրության նախագիծը՝ կանանց

գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների մասին։

2) Առաջարկել ռայոնական գործկոմիտներին՝ կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունները կազմակերպել գյուղական խորհուրդների մոտակա հերթական պլենումներում, այնպես, որ նրանք կազմակերպվեն բոլոր գյուղխորհուրդներում մինչև 1932 թ. մարտի 8-ը —կանանց միջազգային օրը։

3) Աշխատավոր կանանց կենցաղի սոցիալիստական վերակառուցման Աղրկոմիտեն և Աղրկենտգործկոմի կազմբաժինը պետք է գործուղեն Աղրկոմիտեի նախագահության ու պլենումի անդամներին և իրենց բոլոր հրահանգիչներին՝ կանանց գյուղատնտեսական խորհրդակցություններ կազմակերպելու համար։

4) Առաջարկել ռայոնական գործկոմիտներին, անձնապես ռայգործկոմների նախագահներին, փնտրել ու ստեղծել սկզբնական ժամանակի համար նյութական բազա՝ կանանց գյուղատնտեսական խորհրդակցություններ կազմակերպելու, այդ նպատակով մոբիլիզացիայի յենթարկելով հենց ռայոնի բոլոր միջոցներն ու հնարավորությունները։

5) Առաջարկել կոլխոզա-կոոպերատիվ սիստեմին և Ազսենեթբիրլիգին՝ իրենց կողմից ռեալ ոգնություն հասցնել ռայոններին—կանանց տնայնագործական զբաղմունքները լայնորեն կազմակերպելու գործում, կանանց տնայնագործական զբաղմունքների արտադրանքը պարզ ու ռացիոնալ կերպով վաճառելու և այլն։

6) Առաջարկել ռայոնական գործկոմիտների նախագահություններին՝ առաջին անգամ կազմակերպվող կանանց գյուղատնտեսական խորհրդակցություններն ուժեղացնելու և նրանց լավագույն ղեկավարությունն ապահովելու համար՝ վերջիններիս ամրացնել ռայգործկոմների նախագահության մեկական անդամ։

7) Ռայգործկոմի նախագահության ամրացված անդամը պարտավոր է ներկա լինել՝ գյուղխորհրդի այն պլենումին, որտեղ պիտի կազմակերպվի կանանց գյուղատնտեսական խորհրդակցությունը, վերջինիս առաջին կազմակերպչական նիստին, գյուղխորհրդի միջոցով պիտի կազմակերպվի և առաջ շարժի կանանց խորհրդակցության աշխատանքը, կարդավորի գյուղխորհրդի ղեկավարությունը՝ կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցության

վերաբերմամբ և հետագայում էլ իր անմիջական մշտական հսկողության տակ առնի կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցության աշխատանքն ու գործունեության զարգացումը։

8) Առաջարկել ռայոնական գործադիր կոմիտեների նախագահություններին՝ ամեն մի ամսի վերջը կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների աշխատանքի մասին լսել ռայգործկոմի նախագահության՝ խորհրդակցություններին ամրացված անդամների զեկուցումները։

Հարցադրումը, անձնապես դրվում է ռայգործկոմների նախագահների վրա։

9) Առաջարկել աշխատավոր կանանց կենցաղի սոցիալիստական վերակառուցման Ադրկոմիտեին և Ադրկենտգործկոմի կազմբաժնին՝ այս վորոշման կատարման ընթացքի մասին զեկուցում ներկայացնել Ադրբկենտգործկոմի նախագահության 1932 թ. մարտի 1-ին նիստին։

10) Առաջարկել մամուլի կենտրոնական ու տեղական օրգանների, «Շարք Կոլիդի» և «Շարք Կոլխոզչիսի» ժուրնալների խմբագրություններին՝ ժողովրդականացնել կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների կազմակերպման

հարցը և մամուլում սիստեմատիկ կերպով լուսաբանել նրանց աշխատանքը։

11) Առաջարկել Ազերնեշրին՝ ընկ. Տրինիչի պատասխանատվությամբ՝ մինչև 1932 թվի հունվարի 1-ն ավարտել գյուղխորհուրդներին կից կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների կանոնադրության, նույնպես և արտադրական խորհրդակցությունների կին անդամների մեջ անհրաժեշտ աշխատանքի կազմակերպման մասին նյութերի հրատարակությունը՝ թուրքերեն, հայերեն և ռուսերեն լեզուներով։

12) Սույն վորոշումը հրատարակել մամուլում։

Սույն վորոշումը արված է Ադրկենտգործկոմի պրեզիդիումի 1932 թվի փետրվարի 17-ին՝ ընդունած փոփոխություններն ու լրացումները հաշվի առնելով։

61400-67
БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ZUUՈ-Арм.ССР им. А. Мясникяна

«Բոլշևիկյան, խորհրդային հեղափոխությունն այնպես խոր է կտրում կանանց ճնշման ու անհավասարության արմատները, որպես չի համարձակվել կտրելու աշխարհիս վրա մի կուսակցություն և մի հեղափոխություն»։

ԼԵՆԻՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՎ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԿԻՑ ԿԱՆԱՆՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաստատված է Ադրբեջանական Գործադիր կոմիտեի պրեզիդիումի կողմից դեկտեմբերի 23-ին, արձանագրություն № 13.

Ադրբեջանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի պրեզիդիումը որոշում է.—

1. Կոլխոզային, սովխոզային, բատրակա-չքավորական և միջակային կանանց լայն մասսաները գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման մեջ ներգրավելու համար՝ կոլխոզային շինարարության և համատարած կոլեկտիվացման ու

նրա հիման վրա կուլակության—որպես դասակարգ լիկվիդացիայի յենթարկելու բազայի վրա, նույնպես և նրանց գործնական փորձառությունն ոգտագործելու նպատակով, մանավանդ, գյուղական տնտեսության առանձին ճյուղերի (կաթնային, անասնապահական, վոչխարաբուծական, թռչնաբուծական, բանջարաբուծական. շերամապահական, մեղվաբուծական, խոզաբուծական, կանանց տնայնագործական զբաղմունքների և այլն) զարգացման համար (թե կոլխոզների անդամների տնտեսություններում—գյուղական տնտեսության չհամայնացրած ճյուղերի վերաբերմամբ, և թե մենատնտեսների տնտեսություններում), վորոնցում կանանց աշխատանքն ունի ամենամեծ գործադրություն և մեծ նշանակություն, կազմակերպել բոլոր գյուղխորհուրդների յեվ ռայոնական գործադիր կոմիտեների կից կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցություններ, վորոնք գործելու են գյուղխորհուրդների ինքնուրույն սեկցիաների իրավունքներով:

2. Կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունները կատարում են հետևյալ աշխատանքը.—

ա) մշակում և կենսագործում են գործնական միջոցառումներ՝ թե կոլխոզների անդամների և թե մենատնտեսների՝ գյուղական տնտեսության առանձին ճյուղերի և զբաղմունքների բարձրացման ու զարգացման վերաբերմամբ.

բ) մշակում են միջոցներ՝ գործնականորեն կիրառելու գյուղատնտեսական և զոոտեխնիկական (անասնաբուծական) մինիմումը գյուղական տնտեսության առանձին ճյուղերում, բացատրելով կանանց լայն մասսաներին այդ միջոցառումների արմատացմանը գյուղական տնտեսության մեջ.

գ) մշակում են միջոցառումներ չհամայնացրած կաթնատու և մանր անասունների բարելավման վերաբերմամբ, կոլխոզների ու սովխոզների ամենավաղ արտադրողներն ոգտագործելու միջոցով.

դ) մշակում են միջոցառումներ չհամայնացրած անասունների կերի հարցը լուծելու վերաբերմամբ, թե կոլխոզների հատակերային բերքի վորոշ մասն ոգտագործելու միջոցով և թե վոչ տնամերձ, չհամայնացրած հողերում արմատապտուղների և այլ կերաբույսերի ցանքսերի հաշվին, նույնպես և անհատական ու խմբական սիլոսներ կազմակերպելով և տնային ավելունքն ոգտագործելով.

ե) մշակում են պլաններ, թե ինչպես չհամայնացրած կաթնատու և մանր անասուններն ընդգրկեն բարելավված ու տաք փարախներով և այլ շենքերով.

զ) մշակում են միջոցառումներ կաթի և չհամայնացրած անասնապահության այլ մթերքների ապրանքայնության բարձրացման և նրանց մշակման մեթոդների բարելավման վերաբերմամբ.

է) միջոցներ են մշակում՝ կենսագործելու կոնտրոլ-ասիստենտական աշխատանքները՝ չհամայնացրած կաթնատու կովերի վերաբերմամբ, և անասնաբուծական վերահսկողության միջոցառումները՝ անասնաբուժական անձնակազմի կողմից գյուղացիական անասուններին ուղիղ սպասարկելու և բժշկելու վերաբերմամբ։ Միջոցներ են ձեռք առնում անասունների համաճարակների ու վարակիչ հիվանդությունների դեմ, աջակցելով անասունների պատվաստմանը, հսկելով, վոր անասունների դերեզմանոցները տեղեր հատկացնեն ու այդ տեղերը կանոնավոր պահեն.

ը) մշակում են գործնական միջոցառումներ շատացնելու չհամայնացրած թռչ-

չունների թիվը, մասնավորապես ինկուբատորներ, բարելավված թռչնարաններ գործադրելով և ուղիղ ու եժան կերպով կերակրման գործը կազմակերպելով.

թ) մշակում են միջոցառումներ՝ հասարակ թռչուններն ավելացեղ թռչուններով փոխարինելու համար, նպաստում են ձվի և թռչնաբուծության այլ մթերքների ամենամեծ ապրանքային արտադրանքին.

ժ) մշակում են միջոցառումներ՝ զարգացնելու տների մոտ գտնվող չհամայնացրած այգեգործությունն ու բանջարաբուծությունը և սպառողական ճյուղերն ապրանքային ու յեկամտաբեր ճյուղեր դարձնելու համար.

ժա) մշակում են պլաններ՝ չհամայնացրած ու տների մոտ գտնվող հողերում տունկային ցանքսակամպանիա տանելու համար, նրանց ապահովելով տունկային և ցանքսային ավելացեղ նյութերով, վնասատուների դեմ պայքարելու միջոցներով, կազմակերպելով խնամքը և բերքահավաքը, նաև մշակումն ու ապրանքային արտադրանքի վաճառքը.

ժբ) մշակում են գյուղական տնտեսության չհամայնացրած առանձին ճյուղերի

ապրանքային արտադրանքի պայմանագրման պլանը.

ժգ) մշակում են սոցիալիստական մրցության պլաններն ու պայմանագրերը, վոր պիտի կնքվեն առանձին-առանձին կոլտնտեսուհիների միջև՝ նրանցից հարված-ային բրիգադներ կազմակերպելու միջոցով.

ժդ) մշակում են միջոցառումներ՝ գյուղական տնտեսության զանազան ճյուղերում հասարակ տեսակի կամավոր միացումներ զարգացնելու և կազմակերպելու համար.

ժե) սիստեմատիկ վերահսկողություն են ունենում (գյուղխորհրդի հանձնարարությամբ) գյուղացիության բատրակա-չքավորական մասին տրվող գյուղատնտեսական վարկերի և ոգնության այլ տեսակների բաշխման վրա.

ժզ) միջոցառումներ են մշակում չքավորա-միջակային տնտեսություններին խրախուսելու և պրեմիա տալու վերաբերմամբ՝ գյուղական տնտեսության առանձին ճյուղերի մեջ գնահատելի բարելավումներ մտցնելու համար.

ժե) ներգրավում են բնակչության միջոցները՝ գյուղական տնտեսության առանձին ճյուղերի զարգացման և բարելավման համար.

ժը) մշակում են գյուղատնտեսական առանձին ճյուղերի վերաբերմամբ ցուցահանդեսներ կազմակերպելու գործին կանանց ունենալիք մասնակցության պլանը.

ժթ) քննարկում են գյուղական տնտեսության բոլոր հարցերը, որ կապված են չհամայնացրած ճյուղերի զարգացման հետ, նույնպես և լսում ու քննարկում են գյուղատնտեսների, բժիշկների, կոլխոզների, սովխոզների ու կոոպերատիվ սիստեմի ներկայացուցիչների զեկուցումները և այլն.

ի) քննարկում են կոլտնտեսուհիների, սովտնտեսուհիների և մենատնտեսուհիների առաջարկները՝ գյուղական տնտեսության առանձին ճյուղերի բարձրացման և այդ ճյուղերը վարելու միջոցների զարգացման արցերը.

իա) քննարկում և կոնկրետացնում են կանանց տնայնագործական զբաղմունքների, արհեստանոցների և այլն զարգացման պլաններն ու նշում են տնայնագործական զբաղմունքների արտադրանքի վաճառման պլանները.

իբ) կուլտուր-կրթական սեկցիայի ու տեղական գյուղատնտեսների հետ միասին միջոցառումներ են մշակում ագրոանգրագիտության լիկվիդացիայի վերաբերմամբ՝ փորձա-ցուցական հողամասեր, կետեր, գյուղատնտեսական խմբակներ, կուրսեր, զրույցներ, եքսկուրսիաներ, ցուցահանդեսներ կազմակերպելու միջոցով և այլն.

իգ) սովտնտեսուհիների, կոլտնտեսուհիների, բատրակուհիների, չքավորուհիների, միջակուհիների լայն մասսաներին ծանոթացնում են կառավարության ու տեղական որգանների այն բոլոր որենքների ու միջոցառումների հետ, որ վերաբերում են գյուղական տնտեսությանը, նույնպես և նրա առանձին ճյուղերին.

իդ) քննարկում են կանանց աշխատանքն ավելի լիովին և նպատակահարմար գործադրելու հարցերը՝ գյուղական տնտեսության առանձին ճյուղերի և զբաղմունքների մեջ։

Կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների կազմը յեվ նրանց աշխատանքի ղեկավարությունը

3. Կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցություններն իրենց աշխատանքը տանում են համապատասխան գյուղական խորհուրդների և ռայոնական

գործադիր կոմիտեների անմիջական ղեկավարությամբ։

4. Կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների կազմի մեջ մտնում են.—ա) խորհրդի անդամ ու թեկնածու կանայք. բ) վերատուգիչ հանձնաժողովի անդամ ու թեկնածու կանայք, վորոնք ցանկություն են հայտնում աշխատելու արտադրական խորհրդակցություններում, գ) գյուղատնտեսական արտադրական միացումների և կոլխոզների անդամ կանայք. դ) կոլխոզների և գյուղատնտեսական միացումների անդամների ընտանիքի անդամ այն կանայք, վորոնք ընտրվում են տվյալ կոլխոզի կամ միացման կանանց ժողովներում՝ 50 հոգուց մի ներկայացուցիչ ընտրելու նորմայով. ե) մենատնտեսությունների այն բատրակուհիները, չքավորուհիները և միջակուհիները, վորոնք ընտրվում են կանանց ընդհանուր ժողովներում՝ 50 հոգուց մի ներկայացուցիչ ընտրելու նորմայով. զ) գյուղական սպառկոոպերների ու դայրեկտորիաների վարչությունների ու վերատուգիչ հանձնաժողովների անդամ կանայք. ե) կին-գյուղատնտեսները, կոոպերատորները, ուսուցչուհիները, բժշկուհիները և այլն, ը) մյուս ակտիվիստ

կանայք և պատվիրակուհիները, վորոնք ցանկություն են հայտնում աշխատելու գյուղատնտեսական արտադրական խորհրդակցություններում։

Ծանոթություն.— Կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների անդամ չեն կարող լինել այն կանայք, վորոնք զրկված են ընտրական իրավունքներից։

Կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների կազմը հաստատվում է գյուղխորհրդի նախագահության կողմից։

5. Կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունը՝ հարցերը խորհրդակցության համար պատրաստելու և ընդունված վորոշումների կատարումն ստուգելու համար՝ իր կազմից ընտրում է բյուրո —5-ից մինչև 9 հոգուց (նախագահ, քարտուղար, բյուրոյի անդամներ)։ Կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցության նախագահությունը թեկնածությունը հաստատվում է գյուղխորհրդի նախագահության կողմից։

6. Կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունը գործում է պլանով, վորը մշակվում է խորհրդի ընդհանուր պլանի համաձայն, և գումարվում

և դաշտային աշխատանքներից ազատ ժամանակ, սակայն ամսական մի անդամից վոչ պակաս։

7. Կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների մշակած բոլոր միջոցառումները և ընդունած վորոշումները մտցվում է գյուղխորհրդի (նախագահության կամ պլենումի) հաստատմանը, և հաստատելուց հետո կենսագործվում են վորպես գյուղխորհրդի վորոշումներ։ Յեթե անհրաժեշտ է խորհրդակցության նախագծած միջոցառումները շուտափույթ կերպով կենսագործել, նրանք իրագործվում են անհապաղ խորհրդի նախագահի կողմից հաստատվելուց հետո։ Հետագայում այդ միջոցառումները պետք է հաստատվեն խորհրդի կամ նրա նախագահության հերթական նիստում։

8. Կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունները թե իրենց նախաձեռնությամբ և թե գյուղխորհրդի առաջարկությամբ հետազոտություններ են կատարում իրենց իրավասության սահմաններում և իրենց յեզրակացությունն ու գործնական առաջարկները հանձնում գյուղխորհրդին։

9. Կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունները՝ գյուղական տնտեսության զարգացման ու բարձրացման ընդհանուր հարցերի վերաբերմամբ իրենց առաջարկներն ու նախագծերը մտցնում են խորհուրդներին կից գոյություն ունեցող ընդհանուր գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունները։ Կարիք յեղած դեպքում հարց են դնում այդ խորհրդակցությունների միացյալ նիստեր հրավիրելու մասին։ Բացի այդ՝ կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունները կարող են թե իրենց նախաձեռնությամբ և թե կանանց պատվիրակային ժողովների պահանջով՝ վերջիններիս քննարկմանը դնել՝ թե գյուղական տնտեսության առանձին ճյուղերի զարգացման առանձին հարցերը և թե կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների ու նրանց առանձին անդամների գործունեության մասին զեկուցումներ։

10. Կանանց գյուղատնտեսական խորհրդակցությունների անդամները կարող են ընդհանուր գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների անդամ չլինել։

11. Կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցություններն իրենց

գործունեության մասին հաշիվ են տալիս 3 ամիսը մի անգամից վոչ պակաս՝ գյուղխորհրդի նախագահությանը, իսկ ընտրողներին—գյուղխորհրդի կողմից սահմանված ժամկետներին, սակայն, տարեկան 2 անգամից վոչ պակաս։ Բացի դրանից, կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների անդամներն իրենց աշխատանքի մասին հաշիվ են տալիս՝ իրենց ընտրող կազմակերպություններին ու ընտրողներին 3 ամիսը մեկ անգամից վոչ պակաս։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բոլշևիկյան ղեկավարությամբ ապահովենք կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների կազմակերպումը 3

Վորոշում Ադրկենտգործկոմի պրեզիդիումի 1931 թ. դեկտ. 23-ին . 13

Կանոնադրություն գյուղխորհուրդների և ռայգործկոմների կից կանանց գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների մասին . 19

ՊԵՏ ԿՈՄ ԿՐ. ԳԱՐՄԸ
ԳԱՍ Գրադարան
ՀԱՍՍՌ-ԱՄՆ ՍՍՀ
Ա. ՍՄԻՄ Ա ՄԱՍՆԻԿՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ

5 SEP 2
1 DE

Ա Ն
Ն
Ք Ն
Ձ Ր
Ի

ՈՐՈՇՈՒՄԸ
ՋՆՈՐԴՈՂԸ

Վ Ա Ն

ՀՀ Ազգային գրադարան
NL0205127

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.

С А 32-V / 191

Kadьn qənt təsərrufat İstehsalat muşavərələri

AZƏRNƏŞR
Bakı—1932